## ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա.Տ. ԱՍԼԱՆՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Ակադեմիկոս Ա. Տ. Ասլանյանի 100-ամյակի կապակցությամբ կայացած գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հ.Կարպետյանի անվան Երկրաբանական թանգարանում 2019թ փետրվարի 7-ին բացվեց ժամանակավոր ցուցադրություն, որտեղ ներկայացված է ակադեմիկոսի գիտական ժառանգությունը, արխիվային նյութերից վերցված լուսանկարներ, կյանքին և գործունեությանը վերաբերվող բազմաթիվ հայրենական և արտասահմանյան պարգևներ, ինչպես նաև անձնական իրեր՝ դաշտային գրկույկը, գրիչը, վայրկյանաչափը և այլն: Ա.Տ.Ասլանյանի անձնական արխիվից ցուցադրված է 47 լուսանկար, նվիրված ակադեմիկոսի աշխատանքային գործունեությանը, 15 միջազգային պատվոգիր: Ցուցադրությունում առանձնահատուկ տեղ են գրավել նրա միներալների անձնական հավաքածուից 12-ը, որոնցից 8-ը՝ նվիրվել է երկրաբանական թանգարանին (քվարց-մոլիբդենային երակ՝ Թեղուտի հանքավայրից, վարդագույն քվարց Բայկալից, քվարցիտ Իջևանի շրջանի Լուսաձոր գյուղից, պիկնիտ Գերմանիայից, ոսկու հանքանյութ Սոտքից և այլն) և 4 ցուցանմուշ՝ Հայաստանի բնության պետական թանգարանից, որոնք նախկինում ցուցադրվում էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Երկրաբանական վարչության թանգարանում՝ բերված լինելով Ա.Տ.Ասլանյանի անմիջական միջամտությամբ (ամեթիստ ժեոդ, մամռային ագաթ, ագաթ-ամեթիստի յուրահատուկ նմուշներ Սարիգյուղի



ագաթի հանքավայրից):

Առանձնահատուկ ուշադրության է արժանի 1979թ. Հայկական երկրաբանական ընկերության կողմից Ա.Տ.Ասլանյանի 60-ամյակին նվիրված հուշանվերը՝ պատրաստված բարձրորակ բնագունեղ քարերից՝ նեֆրիտ, ռոդոնիտ, արհեստական ռուբին, ցիտրին, ծխագույն քվարց, քրոմդիոբսիդ և այլն՝ Հայկական լեռնաշխարհի ուրվագծով: Որպես արվեստի ինքնատիպ գործ՝ դիտարժան է Ա.Տ.Ասլանյանի պղնձաձույլ դիմաքանդակը՝ քանդակագործ Սուրեն Նազարյանի հեղինակությամբ՝ նվիրված ակադեմիկոսի 65-ամյակին: Առանձին ցուցափեղկով ներկայացված են Ա.Տ.Ասլանյանի մենագրությունները, գիտական հոդվածներ, քարտեզներ:

Ցուցանմուշների շարքում են Ա.Տ.Ասլանյանին շնորհված 1983թ. Գերմանիայի Դեմոկրատական հանրապետության Երկրաբանական ընկերության կողմից Աբրահամ Գոտլիբ Վերների անվան արծաթյա Պատվո մեդալը, Վրաստանի գիտությունների ակադեմիայի կողմից Ա.Տ.Ասլանյանի 50-ամյակի կապակցությամբ հատուկ հուշամեդալը, ադմիրալ Հ.Իսակովի անվան հուշամեդալը շնորհված 1970թ. Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգ) համանուն նավի բացման արարողության ընթացքում, 1984թ. Մոսկվայի Երկրաբանական միջազգային 27-րդ կոնգրեսի Կազմկոմիտեի կողմից հատուկ շնորհակալագիրը:

Der Vorstand
der Gesellschaft für Geologische Wissenschaften
der Deutschen Demokratischen Republik

verleiht

Herrn Professor
Dr.A.T. Aslanjan

in Anerkennung
langjährig verdienstvoller Arbeit
für die Geologischen Wissenschaften

die

silberne Ehrennadel
– Abraham-Gottlob-Werner-Nadel –

Berlin, 1983

Der Vorsitzende

Հոբելյանական ցուցադրությունը մեծ ուշադրության արժանացավ ինչպես գիտաժողովի մասնակիցների, այնպես էլ ուսանողների, դպրոցականների, օտարերկրացի այցելուների, զբոսաշրջիկների կողմից:

Ցուցադրությունը կազմակերպեցին և ներկայացրեցին թանգարանի աշխատակիցներ՝ Գայանե Գրիգորյան, Աննա Հարությունյան, Նարինե Պողոսյան, Սեդա Ավագյան, Ստելլա Պետրոսյան, Ռուբեն Դավթյան